

րաստեալան մատուցանել յերախանս բազմելոցն» (Վերլծ.)։ Արքունի տաճարին մէջ՝ յետ նախարարաց կարգին կը յիշատակէ Փաւստոս «գոտնկալս գործակալութեանն սպասու» (67), որոնք կը թուին՝ ոչ հասարակ սպասաւորներ, այլ պատուաւոր պաշտօնեայք։ Եւ արդարեւ Գրաստամատ, որ Արշակայ արքունեաց առաջին ու բարձր պաշտօնատարն էր, Անյուշ բերդին մէջ իւր արքային կերակրոյ պահուն «կայր յոտն» եւ կը ծառայէր անոր (Փաւս. 208). եւ չեմ կարծեր՝ թէ առ ի չգոյէ ուրիշ սպասաւորի կ'ընէր զայս. զի հոն ներկայ էին ուրիշ մարդիկ ալ, եւ նոյն իսկ սպասաւորներ, որոնք «եղին առաջի նորա միրգ» եւ այլն։

Այդ ոտնկայ պաշտօնէից մէջ կարեւորագոյնն են «մատոռակը», որոց զիրքն ուրիշներէ բարձր էր։ Ագաթանգեղոսի քով՝ Յիսուս «թագաւորի ... մատռռակը արբուցիչը», որ են առաքեալը (376), անտարակոյս Հայոց արքային համանուն պաշտօնէից հետ հեմեմատուած են։ Անոնց այս գերակշռութիւնը միայն մեր մէջ չէր. Պարսից Խոսրով թագաւորը մեր Սրմբատ մարզպանի՝ որդին մեծարելու համար՝ «կարգէր ի մատոռակութեան՝ պաշտել զգինի անձին արքայի» (Սեր. 106)։ Եւ հա-